



05.10.2011

«Էրեբունի» պատամահնագիտական արգելոց-թանգարանի թանգարանային հավաքածուի գիտաօժանդակ ֆոնդն այսօր համալրվեց մայրաքաղաքի 2750-ամյակի և և Էրեբունի հնավայրի մասին պատմող լուսանկարներով՝ արված 1968 և 1998 թվականներին: Լուսանկարները, որոնք արդեն ձեռք են բերել արխիվային արժեք, արգելոց-թանգարանի տնօրինությանը հանձնեց լուսանկարիչ Ռոբերտ Կարապետյանը՝ ով ներկայում բնակվում է Նյու Յորքում: Արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը նվիրատուին հավաստիացրեց, որ առաջին պատեհ առիթի դեպքում դրանք կներկայացվեն թանգարանի այցելուներին և լայն հանրությանը: